ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

# ՀՐԱՄԱՆԸ

«28» դեկտեմբերի 2018 թվականի № 192-Ա

## ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ
## («ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊ ընկերության նկատմամբ)

Հիմք ընդունելով ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության վարչական վարույթ իրականացնող մշտական հանձնաժողովի կողմից քննված «ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐՀ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) նկատմամբ 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 140-Ա հրամանով հարուցված վարչական վարույթի արդյունքները.

Պարզվեց, որ Ընկերությունը չի կատարել աշխատանքային նախագծով սահմանված պահանջները և օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-174 պայմանագրի 3.4.1, 3.4.4, 3.4.26 կետերով սահմանված պարտավորությունները:

Ընկերությունը 2018 թվականի հունիսի 1-ի դրությամբ ունի ընդերքօգտագործման Պ-140 պայմանագրին կից հավելվածով սահմանված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում ստանձված պարտավորությունների մասով ապառք 64 000 000 (վաթսունչորս միլիոն) ՀՀ դրամ գումարի չափով:

Վերոնշյալի արդյունքում Ընկերության կողմից խախտվել են ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին, 2-րդ կետերի և 61-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված դրույթները, աշխատանքային նախագծի և ընդերքօգտագործման Պ-174 պայմանագրի 3.4.1, 3.4.4, 3.4.26 կետերով սահմանված պայմանները, որը ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերի համաձայն հանդիսանում է ընդերքօգտագործման իրավունքի պայմանները ոչ պատշաճ կատարելու վերաբերյալ ընդերքօգտագործողին զգուշացում տալու հիմք:

2018 թվականի հունիսի 21-ի թիվ 01/29.4/3255-18 գրությամբ Ընկերությանը ՀՀ ԷԵԲՊՆ ընդերքի գործակալության կողմից տրվել է զգուշացում թույլ տրված խախտումները 90-օրյա ժամկետում վերացնելու վերաբերյալ: 2018 թ. նոյեմբերի 9-ի թիվ 140-Ա հրամանով Ընկերության նկատմամբ հարուցվել է վարչական վարույթ, սույն վարչական վարույթն երկու անգամ երկարաձգվել է հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 47-րդ հոդվածը:

Հանձնաժողովը, փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկելով՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները գտավ, որ սույն վարչական վարույթն ենթակա է կարճման հետևյալ հիմնավորմամբ.

Ընկերության կողմից վերացվել է վարչական վարույթի հարուցման հիմք հանդիսացած ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով և ընդերքօգտագործման պայմանագրով սահմանված խախտումները, Ընկերությունը կատարել է ապառքների գծով բոլոր վճարումները, ինչը հաստատվում է Ընկերության կողմից վարչական վարույթում ներկայացված համապատասխան վճարման անդորրագրերով:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի՝ վարչական մարմնի նախաձեռնությամբ հարուցված վարչական վարույթը կարող է կարճվել, եթե անձը, ում հասցեագրված է լինելու վարչական ակտը, վերացրել է օրենքի կամ իրավական այլ ակտի պահանջների խախտումները կամ պատշաճ միջոցներ է ձեռնարկել խախտումները կանխելու ուղղությամբ, և նման դեպքերում օրենքն այդ խախտումների վերաբերյալ չի պահանջում վարչական ակտի ընդունում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով,

## ՀՐԱՄԱՅՈՒՄԵՄ՝

1.«ՄՈԼԻԲԴԵՆԻ ԱՇԽԱՐ» ՍՊ ընկերության նկատմամբ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2018 թվականի նոյեմբերի 9-ին թիվ 140-Ա հրամանով հարուցված վարչական վարույթը կարճել:

2. Ընդերքի գործակալության պետին՝ 2-օրյա ժամկետում ծանուցել Ընկերությանը վարչական վարույթի կարճման հրամանի վերաբերյալ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում այն հասցեատիրոջն իրազեկելու պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով, ուժի մեջ մտնելու օրվանից՝ երկու ամսվա ընթացքում:

**ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ** **ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ**

12/28/2018

X

VERIFIED OCSP 28-Dec-18 12:48:06 GMT+4

Signed by: BAGHRAMYAN GAREGIN 3207770118